ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.01.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/57

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Սանասար Մուրադյան» ԱՁ-ի 27.12.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Սանասար Մուրադյան» ԱՁ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Սանասար Մուրադյան» ԱՁ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 27.12.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել էր «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցութային ընթացակարգ: «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցութային ընթացակարգի հայտերի բացման նիստը գնահատող հանձնաժողովի կողմից հրավիրվել է 23.10.2017թ. ժամը 11:00-ին և կազմվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցութային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը:

Այնուհետև, 23.10.2017թ. նույն ժամը 11:00-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցութային ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հրավիրել է մեկ այլ նիստ և այս անգամ կազմել 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի արդեն թիվ 3 արձանագրությունը:

Գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.2. կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Նույն 3-րդ արձանագրության 6.1. կետի համաձայն որոշվել է. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ նույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցութային ընթացակարգի հայտերի բացման 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությունը (նաև նույն օրվա թիվ 3 արձանագրությունը) հրապարակվել է տեղեկագրում միայն 13.11.2017թ. այսինքն, բացման նիստից 20 օր հետո:

Ավելին, անգամ www.oldgnumner.am կայքում հրապարակված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցութային ընթացակարգի գանահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի, ինչպես նաև հայտերի գնահատման նիստի արձանագրությունը հրապարակվել են սխալ ծածկագրի տակ, ինչն անհնարին էր դարձնում նշված արձանագրության որոնումը պաշտոնական տեղեկագրում: Մասնավորապես, www.oldgnumner.am կայքում հրապարակվել է ոչ թե «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը, այլ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը, սակայն որպես տեքստ կցվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգին վերաբերող նյութեր:

Վերոհիշյալի արդյունքում ընթացակարգով շահագրգռված ցանկացած անձ (այդ թվում նաև Սանասար Մուրադյան ԱՁ-ն) զրկվել է հայտերի բացման նիստի արդյունքի վերաբերյալ որևէ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, այդ թվում նաև իր կողմից

որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:

Բացի այդ, նույն 3-րդ արձանագրության 6.1 կետով գնահատող հանձնաժողովի կայացրած որոշմամբ նաև չի նշվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովին ներկայացնելու հստակ վերջնաժամկետ, այլ ընդամենը վերացական նշվել է գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11:00-ն:

Նկատելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից թույլ տրված վերը թվարկված խախտումները՝ Շուշանիկ Հովսեփյանի կողմից 20.11.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է բողոք (ԳԲԽ-ԱՄ-2017/43 ծածկագրով), որով վիճարկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գանահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստերի թիվ 2 և 3 արձանագրությունների իրավաչափության հարցը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը հիմնավոր է համարել ՀՀ գնումների բողոքարկման խարհրդին Շուշանիկ Հովսեփյանի կողմից 20.11.2017թ. ներկայացված բողոքի փաստարկները և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 27.11.2017թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշմամբ բողոքը բավարարվել է, այն է՝ դադարեցվել են ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գանահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստերի թիվ 2 և 3 արձանագրությունները և դրանցից բխող գնահատող հանձնաժողովի կաղմից կայացված այլ որոշումները:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև օրենք) 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Հատկանշական է այն փաստը, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ ի պատասխան ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 27.11.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշման կատարման պահանջի վերաբերյալ, 05.12.2017թ. թիվ ԴՎԱ/4431ա գրությամբ խորհրդին հայտնել է, որ համաձայն չէ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 27.11.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 կայացրած որոշման հետ, և հիմք ընդունելով օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը վերը նշված որոշումը նախատեսում է բողոքարկել դատական կարգով:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 27.11.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշումը կայացնելուց հետո մինչ օրս (մեկ ամսվա ընթացքում) ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այդպես էլ չի կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով իրավապարտադիր ճանաչված ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը:

Ավելին, մինչ օրս առկա չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան ընդունած որևէ դատական ակտ, որով կասեցվել, կամ դադարել, կամ փոփոխվել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 27.11.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշումը: Ուստի նման փաստական հանգամանքների պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մեկ ամսվա ընթացքում ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 27.11.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշման չկատարումը կրում է կամայական բնույթ, որի հետևանքով խախտվում են օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները»:

Ելնելով վերագրյալից և հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 27.11.2017թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշումը, Ընկերությունը Բողոքով խնդրել է.

1. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը դադարեցնելու վերջինիս կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստերի թիվ 2 և 3 արձանագրությունները և դրանցից բխող կայացված այլ որոշումները:

2. Որպես հետևանք՝ պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին 15, 16, 17, 18, 124, 130, 152, 162, 219, 220, չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնող մասնակից «Սանասար Մուրադյան» ԱՁ-ին ծանուցել ներկայացնելու ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Սանասար Մուրադյան» ԱՁ-ի շահերի ներկայացման կապակցությամբ ներգրավված «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ստացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, Խորհուրդը դիմել էր ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ առաջարկելով նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները և Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը, սակայն նշված ժամկետում Բողոքի վերաբերյալ որևէ գրավոր դիրքորոշում վերջինիս կողմից Խորհրդին չի տրամադրվել:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արմեն Սիմոնյանը և Արման Բաղրամյանը:

3. **<u>ԳԲԽ-ԷՍ-2017/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է «Սանասար Մուրադյան» ԱՁ-ի կողմից 27.12.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գանձահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով), 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստերի թիվ 2 և 3 արձանագրությունները, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 27.11.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը կազմակերպել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ): Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «Սանասար Մուրադյան» ԱՁ-ն:

Ընթացակարգի հայտերի բացման նիստը կայացել է 23.10.2017թ. ժամը 11:00-ին, ինչի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից կազմվել է հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը:

Նույն օրը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրավիրվել է մեկ այլ նիստ և կազմել է 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությունը:

Հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.2. կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

«Սանասար Մուրադյան» ԱՁ-ն Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ www.oldgnumner.am կայքում հրապարակված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցութային ընթացակարգի գանահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի, ինչպես նաև հայտերի գնահատման նիստի արձանագրությունները հրապարակվել են սխալ ծածկագրի տակ, ինչն անհնարին է դարձրել նշված արձանագրության որոնումը պաշտոնական տեղեկագրում: Մասնավորապես, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը www.oldgnumner.am կայքում հրապարակվել է սխալ ծածկագրի տակ, սակայն որպես կից ֆայլ կցվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգին վերաբերող նյութ: Արդյունքում, ըստ բողոքաբերի, Սանասար Մուրադյան ԱՁ-ն զրկվել է հայտերի բացման նիստի վերաբերյալ որևէ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, այդ թվում նաև իր կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 27.11.2017թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշմամբ արձանագրված փաստական հանգամանքները՝ պարզեց հետևյալը.

Քաղաքացի Շուշանիկ Հովսեփյանի կողմից 20.11.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է բողոք (ԳԲԽ-ԱՄ-2017/43 ծածկագրով), որով վերջինս Խորհրդին ներկայացրել է հետևյալ պահանջները.

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստերի թիվ 2 արձանագրությունը համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի

պահանջներին և շտկված արձանագրությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ճիշտ ծածկագրով հրապարակել տեղեկագրում:

2. Որպես հետևանք՝ դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստերի թիվ 3 արձանագրության 4.2 կետով կայացրած որոշումը, այն է՝ մասնակիցներից հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ, ինչպես նաև նույն արձանագրության 6.1 կետով կայացրած որոշումը:

3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ ներկայացնելու գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. Ներկայացված 1-3 կետերի պահանջները ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից չբավարարվելու դեպքում՝ թույլ տրված խախտումների հիմքով պարտավորեցնել ՀՀ ՊՆ-ին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթը:

Խորհուրդը՝ քննելով քաղաքացի Շուշանիկ Հովսեփյանի կողմից 20.11.2017թ. ներկայացված բողոքը, 27.11.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշմամբ մասնակի բավարարել է այն: Մասնավորապես, Խորհուրդը որոշել է դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստերի թիվ 2 և 3 արձանագրությունները և դրանցից բխող գնահատող հանձնաժողովի կողմից կայացված այլ որոշումները, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարելու պահանջի մասով բողոքը մերժել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:
- 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի պատճառաբանված որոշմամբ նույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Սանասար Մուրադյան» ԱՁ-ի 27.12.2017թ. Խորհրդին բողոքով ներկայացված պահանջներն արդեն իսկ բավարարվել են քաղաքացի Շուշանիկ Հովսեփյանի կողմից 20.11.2017թ. ներկայացված բողոքի վերաբերյալ 27.11.2017թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սանասար Մուրադյան» ԱՁ-ի կողմից 27.12.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ